ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

- ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին զորահավաքային նախապատրաստման բնագավառում պլանային գործառույթներ իրականացնելիս զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական աջակցություն:
- Իրականացվել է զորահավաքային նախապատրաստության մասով՝ պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստման աշխատանքներ.
- Իրականացվել է մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային պլանների մշակման աշխատանքները, մասնակցել ենք զորահավաքային պլանների կատարման աշխատանքներին.
- Համագործակցել ենք հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող լիազոր մարմնի, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև այլ մարզերի զորահավաքային մարմինների հետ.
- Զորահավաքային նախապատրաստության բաժինը մասնակցել է 2023 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով Հայաստանի Հանրապետությունում անցկացված վարժական հավաքների շրջանակներում հայտարարված զորակոչին առնչվող աշխատանքներին և իր լիազորությունների սահմաններում ցուցաբերել է անհրաժեշտ աջակցություն.

  Համագործակցել ենք ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման, մարզի համայնքների ղեկավարների, ծանուցման տեղամասերի անձնակազմի և կազմակերպությունների հետ.
- Զոհված և անհայտ բացակա համարվող զինծառայողների հարազատներին ցուցաբերվել է կազմակերպչական և խորհրդատվական աջակցություն.

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» №1835-Ն որոշումը, և ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների դրույթներով, ուսումնասիրվել են ՀՀ ՊՆ Զ և ԶՀ ծառայության Շիրակի մարզային ստորաբաժանումից ստացված զորակոչիկների անձնական գործերը, որոնք ըստ ներկայացված փաստաթղթերի ենթակա են եղել տարկետման, որոնց ուսումնասիրություններից հետո ներկայացվել են մարզային հանձնաժողովի քննարկմանը և տրվել են համապատասխան եզրակացություններ.
- Նախարարություններից ստացված զորահավաքային նախապատրաստության բնագավառին առնչվող որոշման նախագծերը ուսումնասիրվել, քննակրվել են և անհրաժեշտ առաջարկությունները ներկայացվել են համապատասխան նախարարություններ.
- Իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանված զորահավաքային նախապատրաստության հետ կապված այլ գաղտնի գործառույթներ, որի գործընթացի վերաբերյալ անձամբ զեկուցում եմ ՀՀ Շիրակի մարզպետին:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զորահավաքային
նախապատրաստության բաժնի պետ՝ Մ.Մարգարյան